

ՀԱՅԵՐԵՆ ՎԻՄԱԳՐԵՐԻ ԴԻՎԱՆԸ

ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս Ռ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հայ ժողովրդի հինավուրց և բազմահարուստ մշակույթի մեջ իրենց արժանի տեղն են գրավում նաև հայերեն վիմագիր արձանագրությունները: Հայերն ունեցել են մի հնավանդ և ամենարարձր գնահատանքի արժանի սովորություն՝ արձանագրություններ են փորագրել իրենց կառույցա քաղաքների, ամրոցների, դղյակների, վանքերի, եկեղեցիների պատերին, դամբարանների ու խաչքարերի վրա: Այդ արձանագրություններն ունեն պատմական և մշակութային խոշոր նշանակություն, վկայություններ են ժողովրդի կյանքի ու շինարար գործունեության ամենաբազմազան հարցերի մասին: Բարեբախտություն է, որ այդ արձանագրությունների կարևորությունը ժամանակին ըմբռնել են մեր նախնի գործիչները, առաջիկը՝ Մովսես Խորենացին: Սանրամասն նկարագրելով Վան քաղաքի կառուցումը և վերագրելով այն Ասորեստանի թագուհի Սամիրամին, Խորենացին շարունակում է. «Եսկ զրնդդմ արեգական կողմն անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերադրել ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն նիւթոյ պէս պէս տաճարս և աննակս օթից և տունս գանձուց և վիհս երկարս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց: Իսկ զամենայն երեսս քարին իբրև դրշու դմմ հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում սեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»:

Խորենացին նկարագրում է նաև Արտաշես թագավորի կանգնեցրած սահմանաքարերը, սակայն նրանց վրա փորագրված արձանագրությունների մասին ոչինչ չի հաղորդում:

Մովսես Խորենացու հաղորդած հաջորդ վկայությունը վերաբերում է Գառնի ամրոցի կառուցմանը և այդ առթիվ Տրդատ թագավորի թողած արձանագրությանը¹. «Ձայսու ժամանակաւ կատարէ Տրդատ զշինուած ամրոցին Գառնուոյ, զոր որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթագամ և կապարով մածուցեալ յորում շինեալ և տուն հովանոց, մահարձանօք, սքանչելի դրօշուածովք, բարձր քանդակաւ, ի համար քեռ իւրոյ Խոսրովիդիստոյ, և դրեալ ի նմա զիշատակ իւր հելլենացի գրով»²:

Գառնիում 1945 թ. հայտնաբերվել է ամրոցի շինությանը վերաբերող հունարեն արձանագրություն: Նրա առաջին մասում ասված է. «Հելլոս Տիրիդատես մեծը Մեծ Հայքին իշխելով իբրև ինքնակալ տեր, կառուցեց տաճար թագուհու համար և [այս] անառիկ ամրոցը իր թագավորության տասներմեկերորդ տարում»:

Արձանագրության երկրորդ մասն ուսումնասիրողների կողմից (Ստեփան Լիսիցյան, Աշոտ Աբրահամյան, Հակոբ Մանանդյան, Կամիլա Տրեվեր)

¹ Հայաստանի տարածքում այդ սովորության ունեցել են նաև IX—VII դարերի, ուրարտական տիրակալները, որոնք թողել են հարյուրավոր սեպագիր արձանագրություններ:

² Մովսես Խորենացու Պատմութիւն Հայոց. Տիգրիս, 1913, էջ 541:

³ Նույն տեղում, էջ 241, 242:

⁴ Նույն տեղում:

վերծանության տարակարծություններ է առաջ բերում, ուստի չենք վկայակոչում, բայց անհրաժեշտ ենք համարում նշել, որ հիշատակված են Մենենոս լիտուրգոսը և Մատե վկան։ Հետևաբար, ամրոցը կառուցվել է լիտուրգիայի՝ հասարակական պարտադիր աշխատանքի կարգով՝ լիտուրգոսի ղեկավարությամբ, որը կազմակերպում էր հասարակական պարտադիր աշխատանքը և, թերևս, իր վրա էր վերցնում ծախսերի մի մասը, ուստի և վկա էր պետք։

Մովսես Խորենացուց հետո հաջորդ հեղինակը Ստեփանոս Օրբելյանն է, որը զգալի քանակությամբ X—XIII դդ. հայերեն վիմագիր արձանագրություններ է հավաքել և օգտագործել իր նշանավոր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ, ըստ որում բավականաչափ ստույգ բնագրերով։

Նրախտագիտության արժանի է նաև XVII դարի մատենագիր Զաքարիա Սարկավազ Քանաքեռցին, որն իր ժամանակին հավաքել է Օհանավանքի պատերին փորագրված արձանագրությունները և ընդգրկել դրանք իր գրած պատմության վերջում։

XIX դարի առաջին քառորդում արդեն առաջացել է հայերեն արձանագրությունների հավաքման և նրանց ժողովածուների հրատարակման անհրաժեշտությունը։ Սկսած XIX դարի 30—40-ական թթ. հաջորդաբար հրատարակվում են բազմաթիվ աշխատություններ, ընդգրկելով մեծ քանակությամբ հայերեն վիմագիր արձանագրություններ (ցուցակը բերված է Կ. Կոստանյանի կազմած «Վիմական տարեգիր» ժողովածուում, էջ 28—31)։

Հարկ ենք համարում հիշատակել դրանցից միայն մի քանիսը։

1. Թժշկեան Մ. վ. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, 1830, Վենետիկ։

2. Շանխաբունեանց Յովհ. եպ. Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ դավառացն Այրարատայ, 2 հատոր, 1842, Ս. էջմիածին։

3. Զալալեանց Սարգ. վ. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, 1842, մասն Բ, 1858, Տփղիս։

4. Սարգսեան Ն. վ. Տեղագրութիւնը ի Փոքր եւ ի Մեծ Հայս 1864, Վենետիկ։

5. Մռռաճաճեան Գ. վ. Թորոս աղբուր, 2 հատոր, 1879, Կ. Պոլիս։

6. Ալիշան Ղ. վ. Շիրակ, 1881, Վենետիկ։

բ) Այբարատ, 1890, անդ։

գ) Սիսական, 1893 անդ։

դ) Նշմարք և նշխարք Հայաստանի, 3 պրակ, 1870, անդ։

ե) Սիսուան, 1885, անդ։

7. Միտախոբեան Մ. Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, 3 մասն, 1884—1885, Կ. Պոլիս։

8. Բարխուդարեան Մ. եպ. Արցախ, 1895, Բագու։

9. ա) Քաջբերունի (բժ. Գաբրիել Յովհաննիսեան). Ճանապարհորդական նկատողութիւնք, «Փորձ» 1877—79 և 1888—91 թթ. բոլոր համարներում, «Արարատ», 1888, 3-րդ, էջ 161, 12-րդ, էջ 788։

բ) Ճանապարհորդական յիշատակարանք, «Արձագանք», 1884, թիվ 31, էջ 599, թիվ 42, էջ 611, թիվ 48, էջ 627, 1885, թիվ 2, 3, 4։

10. Բասմաչեան Կարապետ, հավաքել է Անիի Բազնայրի և Մարմաշենի արձանագրությունները, հրապարակվել են նաև Ֆրանս. թարգմ. հանդերձ։ Զգալի քանակությամբ արձանագրություններ հրապարակվել են նաև այլ աշխատություններում և մամուլում։

Մեսրոպ Սմբատյանը, սկսած 1870-ական թթ., հավաքել է Հայաստանում եղած և այն ժամանակ հայտնի ուրարտական սեպագիր արձանագրությունները։

Այլ լեզուներով արձանագրությունների հետ միասին հայերեն արձանագրություններ են հավաքել նաև օտարազգի գիտնականները՝ Մ. Բրաունը, Վ. Լանգուան, Դյուրուան (բոլորը XIX դարում)։

XX դարի առաջին տասնամյակներում արձանագրությունները շարունակել են հավաքել հայ գիտնականները՝ Երվանդ Լալայանը, Սմբատ Տեր-Ավետիսյանը, Աշխարհբեկ Քայանթարը։

Նիկողայոս Մառը և Հովսեփ Օրբելին Անիի պեղումների տարիներին ոչ միայն հավաքել, այլև գլխավորել են այդ աշխատանքները և մշակել արձանագրությունների հրատարակման գիտական հիմունքները։

Վաղուց առաջացել էր արձանագրությունները հավաքելու և առանձին ժողովածուներով հրատարակելու անհրաժեշտությունը։ Դեռևս 1879 թ. Ռուսաստանի հնագիտական համադումարի նախապատրաստական կոմիտեն որոշում է հարց բարձրացնել Թբիլիսիում գումարվելիք համադումարի առջև՝ Կովկասի տարածքում գտնվող հայերեն, վրացերեն, հունարեն, եբրայերեն և սեպագիր արձանագրությունների ժողովածուներ կազմելու և հրատարակելու մասին⁵, սակայն գործնականում ոչինչ չստացվեց։

1903 թ. Ն. Մառի ներկայացրած զեկուցագրի հիման վրա Ռուսական Կայսերական Հնագիտական հանձնաժողովը որոշում է իր վրա վերցնել հայկական և վրացական արձանագրությունների կորպուսների հրատարակությունը և Ն. Մառին հանձնարարում է Կովկասյան խորհրդակցություն հրավիրել։ Անհրաժեշտ աշխատանքների ծրագիրը մշակվում է, բայց 1903 թ. խորհրդակցության այդ ծրագիրը անկատար է մնում⁶։

Հրաչյա Աճառյանը ձեռնարկել էր կազմելու հայերեն հրատարակված արձանագրությունների ժողովածու՝ «Հայարձան» վերնագրով, սակայն գործը թերի մնաց, քանի որ դեռևս 1902 թ. Աճառյանը դադարեցրել էր իր աշխատանքն այդ ուղղությամբ։ Անկատար մնաց նաև Ծ. Լալայանի ձեռնարկած ժողովածուի կազմումը, որը, ինչպես և նախորդը, բնույթով էլ չէր հատուկապես նվիրվում կորպուսի պահանջներին։

Մի ժողովածու էլ կազմել և դեռևս 1881 թ. հրատարակել էր Մ. Էմինը՝ Эмин И. Армянские надписи в Карсе, Ани и в окрестностях последнего.

Հայերեն վիճագիր արձանագրությունների կորպուսի հրատարակության ձախողումից հետո Ն. Մառը տեղեկանում է, որ էջմիածնի հոգևոր ճեմարանի նախկին տնօրեն Կարապետ Կոստանյանը կազմել է հրատարակվածությունամբ հայտնի հայերեն արձանագրությունների ժողովածու. բազում գիտական վերապահումներով հանդերձ՝ հանձն է առնում նրա խմբագրությունը և օժանդակում նրա հրատարակությանը։ Ժողովածուն լույս է տեսնում 1913 թ. Պետերբուրգում։ Այն պարունակում էր 1328 արձանագրություն։

Ն. Մառը և Հ. Օրբելին ոչ միայն հետամուտ էին, որ հայերեն արձանագրությունների կորպուսը հրատարակվի, այլև իրենք ձեռնարկել էին վերծանությունը և մշակել հրատարակության գիտական սկզբունքները։ Ըստ այդմ.

1. Յուրաքանչյուր արձանագրություն ինքնըստինքյան մի ամբողջական պատմամշակութային փաստաթուղթ է...

2. Յուրաքանչյուր արձանագրություն, անկախ նրա մեծ կամ փոքր, ամբողջական կամ թերի լինելուց, պետք է հավաքել ու հրատարակել, նույնիսկ մեկ բառ կամ մի քանի տառ կազմող բեկորները...

3. Հավաքելու և հրատարակելու ընթացքում խտրություն չպետք է դնել արձանագրությունների մեջ՝ ըստ նրանց բովանդակության.

⁵ Ս. Բարիսովայան. Հայկական վիճագրություն. ՏԼՄ Դիվան հայ վիճագրության. պրակ 1-ին, Սրեան, 1966, էջ XV:

⁶ Նույն տեղում, էջ 26:

⁷ Կ. Կոստանյանց. Վիճական տարեգիր. Ցուցակ ժողովածույ արձանագրութեանց, Հայոց. Ս. Պետերբուրգ, 1913, էջ 3:

4. Պետք է ճշտորեն պահել բնագրի գրչական, ուղղագրական և այլ կարգի առանձնահատկությունները, հրատարակության ընթացքում վերծանողի հավելումներն ու շտկումներն առնելով պայմանական նշանների մեջ: Որպես վավերականության ապացույց վերծանումներին պետք է կցել արձանագրության լուսանկարը⁸:

Անիի պեղումների տարիներին Օրբելին հավաքել էր Անիի արձանագրությունները և նրանց ժողովածուն ներկայացրել հրատարակության Գիտությունների ակադեմիայի տպարանում, բայց 1924 թ. Պետերբուրգում տեղի ունեցած ջրհեղեղը քշել-տարել էր ժողովածուի շարվածքը և այլ նյութեր, փրկվել էին միայն արձանագրությունների արտատպությունները և լուսանկարների 25 տախտակներ: Ցավոք, 1920-ական թթ. վերջերին կորել էր նաև Ն. Մառի աշակերտ, պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյանի՝ Հյուսիսային Իրանում գտնվող հայկական հուշարձաններից հավաքած արձանագրությունների արդեն հրատարակության պատրաստ ժողովածուն, որը նա տանում էր Պետերբուրգ, հրատարակության համար⁹:

Հայերեն արձանագրությունների հատորավոր դիվաններ հրատարակելու պայմաններ՝ համապատասխան հաստատություն, գիտական կադրեր, այն տարիներին դեռևս չկային: 1943 թ. նոյեմբերին, երբ ստեղծվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիան, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, լինելով նրա պրեզիդենտը, պատմության ինստիտուտի կազմում ստեղծեց հայ վիմագրության բաժին, որը 1959 թ. մտավ նորաստեղծ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի մեջ, և ժառանգեց հայերեն արձանագրությունների դիվան կազմելու և հրատարակելու գործը:

1954 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիան արդեն որոշում էր ընդունել հայերեն արձանագրությունների հավաքման, նրանց ժողովածուների՝ Դիվանի պրակների հրատարակման մասին: Իրական աշխատանքները, սակայն, սկսվեցին 1959 թ. և այդ ժամանակ էլ երևան եկան տարբեր կարծիքներ. ոմանք պնդում էին, որ Դիվանը պետք է հրատարակվի Ն. Մառի և Հովսեփ Օրբելու մշակած «վիմագրական» տառաձևերով, որոնք ձուլված էին Պետերբուրգում և որոնցով Հ. Օրբելին արդեն հրատարակել էր Մարմաշենի վանքի և մի երկու այլ հուշարձանի արձանագրություն: Ինստիտուտի տնօրինությունը և 1960 թ. վիմագրության բաժնի վարիչ ընտրված նշանավոր վիմագրագետ Սեգրակ Բարխուդարյանը վճռականապես առարկեցին դրան, քանի որ տպարանում ձուլված տառաձևերը, միօրինակ լինելով, ոչ մի կերպ չէին արտահայտում տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում դրված արձանագրությունների իսկական տառաձևերը և առանձնահատկությունները: Որոշվեց արձանագրությունները հրատարակել վերծանության ուղեկցող գրչականներով և լուսանկարներով, որին իր համաձայնությունը տվեց նաև Հովսեփ Օրբելին:

Արձանագրությունների հրատարակման Ն. Մառի և Հ. Օրբելու մշակած սկզբունքին կողմնակից էր նաև նշանավոր հնագետ և վիմագրագետ պրոֆ. Կ. Գ. Ղաֆառյանը, որը, սակայն, պնդում էր, որ արձանագրությունները հրատարակվեն այն հուշարձանների մենագրական ուսումնասիրության հետ միասին, որոնց վրա նրանք փորագրված են: Այդ եղանակով նա հրատարակել էր Օջանավանքի, Սանահնի և Հաղբատի վանքերի, ինչպես և Երևանի ու նրա շրջագծի մեջ մտնող հուշարձանների արձանագրությունները:

⁸ Ս. Բարխուդարյան. նշվ. աշխ., էջ 23:

⁹ Ս. Տեր-Ավետիսյանի կազմած ժողովածուն կորել է զնացքում. ուղեորներից մեկը սխալմամբ Տեր-Ավետիսյանի ճամպրուկն է վերցրել և հեռացել, թողնելով իր նույնատիպ ճամպրուկը:

ինստիտուտն ընթացավ Ն. Մառի և Հ. Օրբելու մշակած սկզբունքներով՝ մասնակի փոփոխություններով:

Հնագիտության և Աղագրության ինստիտուտում արդեն պատրաստ էր և հրատարակության հանձնվեց Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջանների արձանագրություններն ամփոփող պրակր, որը լույս տեսավ 1960 թ. Ս. Բարխուդարյանի հեղինակությամբ, պրակների հերթական երկրորդ համարի տակ, ըստի որ որոշված էր առաջին համարով նշել Հ. Օրբելու կազմած Անիի արձանագրությունների պրակր:

Անիի առձանագրություններին նվիրված պրակին կցվեց Հ. Օրբելու «Հայերեն վիճակաւն արձանագրությունների նշանակությունը» ուսումնասիրությունը, որը «Շիրակի վիճակաւն արձանագրություններ» թեմայով Պետերբուրգի համալսարանում 1914 թ. նրա կարդացած դասընթացի¹⁰ ներածական մասն էր:

«Դիվան հայ վիճադրության» հիշյալ առաջին պրակը լույս տեսավ 1966 թ. Ս. Բարխուդարյանի խմբագրությամբ ու «Հայկական վիճադրություն» առաջաբանով:

Դիվան հայ վիճադրության մատենաշարով արդեն լույս է տեսել 7 պրակ:

1. 1966, Անի քաղաք, կազմող Հ. Ա. Օրբելի, 266 արձանագրություն,
2. 1960, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմող Ս. Գ. Բարխուդարյան, 421 արձանագրություն:
3. 1967, Վալույց ձոր, Եղեգնաձորի և Ագիդբեկովի շրջաններ, կազմող Ս. Գ. Բարխուդարյան, 313 արձանագրություն:
4. 1973, Գեղարքունիք, Կամուլի, Մարտունու, Վարդենիսի շրջաններ, կազմող Ս. Գ. Բարխուդարյան, 1547 արձանագրություն:
5. 1982, Արցախ, կազմող Ս. Գ. Բարխուդարյան, 1071 արձանագրություն:
6. 1977, Իջևանի շրջան, կազմողներ Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանփոլադյան, 355 արձանագրություն:
7. 1996, Ուկրաինա, Մոլդավիա, կազմող Գ. Մ. Գրիգորյան, 776 արձանագրություն:

Ընդամենը՝ 5249 արձանագրություն:

Ի դեպ, «Դիվանին» դուգրնթաց եղան վիճադրերի այլ հրատարակություններ ևս. «Սիոն» հանդեսում լույս տեսավ 1914 թ. Մուշից և շրջակայքից նադարեթ Մարաիրոսյանի հավաքած 131 արձանագրություն («Սիոն», 1967—1968), հայադետ Գաբրիելլա Ուլուհաջյանը բնագրով ու իտալերեն թարգմանությամբ հրատարակեց Ատրպատականի հայերեն վիճադրերը (1977, 1981), իսկ Պ. Մուրադյանը Քարթլիի և Կախեթի հայերեն և Հայաստանի վրացերեն արձանագրությունների ուսումնասիրությանն ու հրատարակությանը նվիրեց «Арменог-География»-ի երեք հատոր:

Այժմ հրատարակության պատրաստ է Քուռի ձախափնյակի (Բուն Ագվանք) հայերեն արձանագրությունների ժողովածուն, շուրջ 500 միավոր, որ կազմել է երիտասարդ ճարտարապետ Սամվել Կարապետյանը:

Վիճադրության բաժնի վարիչ Գ. Մ. Գրիգորյանը հավաքել է Ռուսաստանյան Դաշնության տարածքի հայերեն արձանագրությունները: Հնագիտության և Աղագրության ինստիտուտի նախկին աշխատակից, վիճադրագետ

¹⁰ Ռուսերենից հայերեն թարգմանել էր ինստիտուտի շնորհալի վիճադրագետ, վաղամեծիկ Սուրեն Ավագյանը:

Գազիկ Սարգսյանը հավաքել և հրատարակության է պատրաստում Նիզի և Կոտայքի արձանագրությունները: Պ. Մուրադյանի խմբագրությամբ ու առաջարկով հրատարակության է հանձնված հանգուցյալ բանասեր Գ. Բամպուրճյանի կազմած «Տապանագիրք Սկյուտարի» հատորը:

ДИВАН АРМЯНСКИХ ЛАПИДАРНЫХ НАДПИСЕЙ

Академик НАН РА Б. Н. АРАКЕЛЯН

Резюме

Армяне еще в древности имели обычаи высекать надписи на стенах своих дворцов, церквей, монастырей, жилищ и хозяйственно-бытовых сооружений, на надгробных памятниках и хачкарах. Эти надписи отражают историю, многие стороны жизни и быта народа и являются многогранным документом прошлого. Их значение было осознано еще в древности и в средних веках. В XIX в. обычным типографским способом был опубликован ряд сборников надписей, не соответствовавших однако научным принципам настоящего времени. Сугубо научные принципы публикации надписей были выработаны Н. Я. Марром и И. А. Орбелли. Согласно этим принципам надпись должна быть опубликована с идентичным сохранением ее форм и особенностей. Так при раскопках Аппи И. А. Орбелли составил сборник надписей города, представленный к публикации в типографию Академии наук, однако во время наводнения 1924 г. в Петербурге набор надписей был уничтожен и удалось спасти лишь их тексты и 25 фоторепродукций. В 1954 г. Президиум Академии наук Армении принял постановление о создании Дивана (Корпуса) армянских надписей. Осуществление работы было возложено на Институт археологии и этнографии, в составе которого был сектор эпиграфики. Уже в 1960 г. вышел в свет один из выпусков сборника, но сочли целесообразным первым номером обозначить выпуск Дивана, содержащий надписи Аппи. В настоящее время уже опубликовано 7 выпусков Дивана, содержащих 5249 надписей. Значителен вклад заведующего отделом, покойного Седрака Бархударяна, которым составлены выпуски 2, 3, 4 и 5. Ныне готовятся последующие выпуски под руководством заведующего отделом эпиграфики Института археологии и этнографии Г. М. Григоряном.